



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Սովորողների մոտ արժեքային համակարգի
ձևավորումը ֆիզիկա առարկայի դասավանդման ընթացքում*

Առարկան՝ Ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Պողոսյան Անուշ

*Ուսումնական հաստատություն՝ Վերին Արտաշատի միջնակարգ
դպրոց*

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1	5
Գլուխ 2	7
Արժեքային համակարգ՝	7
Եզրակացություն	13
Օգտագործված գրականության ցանկ	14

Ներածություն

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության, իսկ հասարակությունը դառնում է տեղեկացված: Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը: Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու, տեղաշարժվելու կարողությունը:

Կրթության դերն աճում է և միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է ժողովրդավարություն և ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն: Կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով:

Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն: Հայաստանի Հանրապետությունում կրթությունը երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաշխիք է:

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, զարգացած անհատ և քաղաքացի ձևավորելն ու իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է:

Արդի տնտեսական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Յուրանքանջյուր ուսուցչի, այդ թվում նաև ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի ֆիզիկա առարկան յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ունենա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Ֆիզիկայի դասերին անհրաժեշտ է լուծել նաև դաստիարակչական խնդիրներ:

Ֆիզիկայի դերը կարևորվում է նաև մեզ համար հույժ կարևոր հայրենիքի պաշտպանության և ռազմական տեխնիկայի ստեղծման մեջ բացահայտումների հանդեպ հետաքրքրվածության ուժեղացմամբ: Ֆիզիկայի դասերին ուսումնասիրվող ֆիզիկական երևույթների ու օրենքների, ռազմական տեխնիկայում կոկնկրետ կիրառման օրինակներով, ապագա զինվորին անհրաժեշտ պրակտիկ կարողությունների ձևավորումով դրվում են սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքերը:

Գլուխ 1

Արժեքային համակարգ

Արժեքները դատողություններ են այն մասին, թե ինչն է կյանքում կարևոր: Հասարակության որոշ արժեքներ մեզ են փոխանցվում մանկության տարիներին, դրանք են՝ էթիկայի կանոնները, բարոյական կոդեքսը: Արժեքները հատուկ համոզմունքներ են այն մասին, թե ինչն է կարևորն ու անկարևորը, լավն ու վատը, ճիշտն ու սխալը: Իսկ ի՞նչ նկատի ունենք իրական արժեքներ ասելով, որո՞նք են կյանքի իրական արժեքները: Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ ու քաղաքացի, որը պետք է՝

- Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
- Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,
- Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,
- Կարևորի բարոյական չափանիշներն ու քրիստոնեական և համամարդկային արժեքները, լինի ազնիվ, լինի գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,
- Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը,
- Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ դրսևորման կարևորությունը,
- Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,
- Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական

անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

- Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի և գնահատի սեփական և այլոց աշխատանքը,
- Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Արժեքային և աշխարհայացքային համակարգի ձևավորումը կրթության հիմնախնդիրներից է: Մանկավարժական կրթական ծրագրերի հիմնանպատակներից մեկն է ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի: Տեսական և գործնական պրակտիկաների համադրման արդյունքում հնարավոր է աշակերտներին փոխանցել գիտելիք, որն անմիջականորեն կապվում է վերջիններիս կենսափորձի հետ՝ սերտ կապակցվելով այն արժեքանորմատիվային համակարգի հետ, որում կատարվում է երեխաների սոցիալականացումը: Աշակերտների հետ աշխատանքում անհրաժեշտ է կիրառել բազմաթիվ հնարներ, ձևաչափեր ու միջոցներ՝ դաստիարակելու համար այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ փոխօգնությունը, դիմացինի կարծիքի հետ հաշվի նստելը, նոր մտքերի ու մոտեցումների առջև բաց լինելը, ուրիշի մտքերն ու աշխատանքը գնահատելն ու չգողանալը, ճշտապահ և պատասխանատու թիմի անդամ լինելը, որոշումներ կայացնելիս բարեհոգության և հարուստ տեղեկությունների վրա հիմնվելը:

Ի վերջո դպրոցը չի կարող լինել պարզապես երեխաների դասդասման համակարգ: Կրթությունը պետք է օգնի և հնարավորություն տա երեխային՝ բացահայտելու իր կարողությունները, ձևավորվելու և աշխարհ գալու որպես անհատ: Չպետք է թույլ տալ, որպեսզի ապրող երեխայի մեջ մեռնեն տաղանդներ:

Գլուխ 2

Արժեքների ձևավորումը ֆիզիկայի դասին

Արժեքային համակարգ՝

- Գիտակցի, որ ուղեղը պետք է օգտագործվի մտածելու համար, ոչ թե միայն պահեստավորելու նպատակով,
- Գնահատի ֆիզիկայի դերը համամարդկային մշակույթի, գիտատեխնիկական առաջընթացի զարգացման գործում:
- Գիտակցի ֆիզիկայի դերը անհատի աշխարհայացքի ձևավորման գործում:
- Կարևորի ֆիզիկա առարկայի դերը տրամաբանական մտածողության զարգացման գործում:
- Գիտակցի ճշգրիտ գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունն առօրյա կյանքում և աշխատանքում:
- Կարևորի մտավոր աշխատանքը, կարողանա նպատակներ և խնդիրներ դնել և դրանց հասնելու համար նպատակասլաց գործունեություն ծավալել:
- Կարևորի գրավոր և բանավոր խոսքի հստակությունը, ճշգրտությունը, հակիրճությունը, մատչելիությունը:
- Գնահատի բնության ներդաշնակությունը, գեղեցկությունը:
- Ձգտի ստեղծագործական աշխատանքի, գեղագիտական հաճույք ստանա դրանից:
- Գնահատի մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա, կարևորի շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումների իրագործումը:

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակի խնդիրներ:

Կրթության և գիտության մեջ առաջնային ու կարևոր տեղ է զբաղեցնում ֆիզիկան: Որպես առաջատար գիտություն ֆիզիկայում կատարված հայտնագործությունները ոչ միայն ընդլայնում են գիտելիքները հիմնական ֆիզիկական պրոցեսների վերաբերյալ, այլև վճռորոշ դեր ունեն այլ գիտությունների զարգացման համար: Ֆիզիկան իր զարգացման բոլոր փուլերում «քայլել է» բնագիտության առաջին շարքերում, հիմք ծառայելով տեխնիկայի հիմնական բնագավառների ձևավորման համար: Իր հարուստ

պատմությամբ, բնության օրենքների մեկնաբանությամբ ֆիզիկան էական դեր է խաղում գիտական աշխարհայացքի ձևավորման գործում:

Ֆիզիկայի դասավանդման գործընթացում արժեքային համակարգի ձևավորման կարևոր խնդիր է մեծացնել աշակերտների հետաքրքրությունը առարկայի նկատմամբ, տալով բնապահպանական դաստիարակություն, գեղագիտական դաստիարակություն, ռազմահայրենասիրական, հոգևոր դաստիարակություն, զարգացնել հուզական-արժեքային մտածողությունը, աշխատասիրությունը:

Որպեսզի ֆիզիկայի ուսուցիչը աշակերտների մեջ մեծացնի հետաքրքրասիրությունն այդ առարկայի նկատմամբ, պետք է կազմակերպի ֆիզիկային նվիրված երեկոներ, որտեղ ծրագիրը գրելիս պիտի ձգտի հաղորդել ոչ այնքան նոր գիտելիքներ, որքան նրանց օգնի՝ «իմանալու այն, ինչ որ նրանք գիտեն», այսինքն՝ խորացնել ու թարմացնել ֆիզիկայի այն պարզագույն տեղեկությունները, որ սովորողներն արդեն ունեն:

Միջոցառման նպատակ պետք է լինի՝ առաջացնել գիտական պատկերացման գործունեություն, սովորեցնել մտածել ֆիզիկայի ոգով և զարգացնել սեփական գիտելիքների բազմակողմանի կիրառման սովորությունը: Ֆիզիկային նվիրված միջոցառման ծրագիրը կազմելիս կարևորություն պետք է տրվի ֆիզիկայի վերաբերյալ բարդ հանելուկերին, հետաքրքրական խնդիրներին, ուսանելի պարադոքսներին, դժվարիմաց հարցերին, ֆիզիկական երևույթների վերաբերող յուրօրինակ համադրումներին:

Այդ նյութերը որոնելիս ծրագիրը կազմող ուսուցիչը պետք է դիմի առօրյա կյանքի երևույթներին, տեխնիկայի բնագավառին, բնությանը, գիտաֆանտաստիկ վեպերի էջերին, մի խոսքով այն ամենին, ինչ գտնվելով դասագրքի և ֆիզիկայի դասասենյակի սահմաններից դուրս, ընդունակ է գրավել հարցասեր սովորողի ուշադրությունը:

Ուսուցիչը պետք է սովորողներին ծանոթացնի ֆիզիկոսներին, նրանց հայտնագործություններին ու կենսագրությանը՝ որպես անձի դաստիարակության միջոցի: Կենսագրական նյութը պետք է կապված լինի կոնկրետ նյութի հետ, ներառվի ընթացիկ նյութի շարադրման տրամաբանության մեջ: Անհրաժեշտ է սովորողների գիտակցությանը հասցնել այն, թե կոնկրետ ինչ է արել այս կամ այն գիտնականը, ինչպես են նրա հայտնագործությունները կամ գյուտերը ծառայել մարդկություն բարորությանը: Կենսագրական նյութը պետք է խթանի ուսումնական բարդ նյութի

յուրացմանը: Այս դեպքում նոր նյութի մատուցումը պետք է սկսվի գիտնականի գյուտարարական տաղանդը, նպատակին հասնելու նրա աշխատասիրությունն ու համառությունը ցույց տվող անջնջելի հուզականորեն հագեցած օրինակով: Կարևոր է սովորողներին ծանոթացնել գիտնականի մտածողության ոճին, աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելու նրանց ձգտմանը, նրանց բարձր քաղաքացիականությանը:

Հիմնարար ֆիզիկական տեսությունների և գիտափորձերի, հետազոտության մեթոդների ուսումնասիրության հիման վրա սովորողների մեջ պետք է ձևավորել պատկերացումներ անձի բարոյական հիմքերի առաջնահերթության մասին, դրվի սովորողների ռազմական, գեղագիտական, հոգևոր դաստիարակության հիմքերը, զարգացնել քննախույզ մտածողություն, դաստիարակել քաղաքացի՝ հումանիստ և խաղաղության պայքարի մարտիկ, ձևավորել ժողովրդական մշակույթի տարրեր, ձևավորել գիտական աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն: Ֆիզիկայի դասերի պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացած գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում (կենցաղ, էկոլոգիա, առողջության պահպանում, շրջական միջավայրի պահպանում, անվտանգության տեխնիկա) օգտագործելու կարողություն:

Այսպիսով, ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի, գաղափարի օգտագործման վրա՝ որպես գիտության, գործառության որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը, խոր հուզմունքով ու հուզականորեն հագեցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովեն ֆիզիկայի ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը:

Ուսուցման մոտիվացիայի բարձրացման նպատակով պետք է օգտագործել ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներ և ինտերակտիվ մոդելներ՝ համատեղելով դրանք ուսուցման ավանդական մեթոդների հետ:

Կարևոր է ապահովել կրթության բովանդակության կապը իրական կյանքի հետ: Այդ առումով ուսուցումը կարող է արդյունավետ լինել, եթե հիմնվի ժամանակակից կյանքից վերցրած օրինակների վրա: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հարցում, նրան որպես զարգացած անհատ դաստիարակելու համար շատ կարևոր է բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում կիրառել և շեշտել

միջառարկայական կապերը: Բնագիտական առարկաների ուսուցմամբ է պայմանավորված նաև աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորումն ու զարգացումը, այն է՝ գիտելիքներ ունենալ բնության օրենքների և օրինաչափությունների, երևույթների, բնության նկատմամբ ներդաշնակ հարաբերությունների մասին: Նրանք պետք է կարողանան մերժել բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը, իմաստավորեն մարդու և բնության հավերժական կապը, ներդաշնակ ապրեն նրա հետ և պատասխանատվություն կրեն նրա համար:

Անհուն տիեզերքում, որտեղ մարդ արարածը բազում ուսումնասիրություններ է կատարում, կան շատ ու շատ մոլորակներ, երկնային մարմիններ, բայց մեր Երկիր մոլորակը միակն է, որտեղ կա այսպիսի բուսական ու կենդանական աշխարհ, բանական էակ՝ մարդը: Եվ մենք պետք է պահենք ու պահպանենք այն, մեր գործունեությամբ չաղտոտենք շրջակա միջավայրը՝ առանց մտածելու բնությանը հասցրած վտանգների մասին: Անաղարտ պետք է պահենք մեր մթնոլորտը, ջրոլորտը և հողը, հնարավորինս խուսափենք մարդածին աղտոտումից: Մենք պետք է լավ սովորենք և ճիշտ ապրենք, անաղարտ պահենք մեր երկրագունդը, որովհետև, մենք ժառանգել ենք աշխարհը մեր ծնողներից, բայց ավելի շատ պարտք ենք վերցրել մեր երեխաներից:

Ֆիզիկայում բնության երևույթների ուսումնասիրությունները կարող են կրթական ծրագրերի տարբեր բնագավառների ինտեգրել և այդ կերպ մոտենալ խտրականությանը, սոցիալական արդարությանը վերաբերող թեմաներին և հարցերին: Բնապահպանական հարցերը այդպիսի մտազննման լավ առարկա են: Օրինակ՝ օդի որակի վերաբերյալ ուսուցողական բաժինը սովորողներին թույլ է տալիս համեմատել և վերլուծել օդի աղտոտմամբ պայմանավորված հիվանդությունները և մահացության ցուցանիշների տարբերություններն ու անհավասարությունը, որը պայմանավորված է, թե որտեղ ենք ապրում, աշխատում: Աշակերտները կարող են ուսումնասիրել այնպիսի գիտական հասկացություններ, ինչպիսիք են օդի որակի ինդեքսը տարբեր տեղամասերում, դա ջերմաստիճանի հետ կապելը, մտազննել՝ արդյոք այդտեղ կա պատճառահետևանքային կապ. այսինքն՝ համեմատության և վերլուծության բոլոր մեթոդներով սովորողները կարողանան տեղափոխվել արդարության և հավասարության սոցիալական հարցերի դաշտ: Բնապահպանական դաստիարակության՝ հատկապես էներգաարդյունավետության ուսուցման համար անհրաժեշտ է ֆիզիկայի գործնական

Ժամերին կիրառել նախագծային մեթոդը, որը միտված կլինի ուսուցման այլընտրաքային, նոր ձևերի ներդրմանն ու կիրառմանը: Էներգաարդյունավետության գաղափարը ձևավորել, այդ գաղափարով կիսվել, լավագույն փորձի փոխանակում անել, առցանց գործիքներով միասին աշխատել, նրանց որպես զարգացած անհատ դաստիարակել:

Հանրակրթական դպրոցի ֆիզիկայի ուսուցման գործընթացում կարևորագույն խնդիր է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը, որտեղ առանձնանում և ընդգծվում է աշակերտների գեղագիտական դաստիարակությունը: «Ամեն մի գիտության մեջ քիչ թե շատ կա գեղագիտական տարր, որի հաղորդումն աշակերտներին պետք է ի նկատի ունենա դաստիարակը», - Կ. Դ. Ուշինսկի:

Ուսուցման գործընթացում ֆիզիկայի ուսուցչի խնդիրն է ուղղորդել աշակերտներին, բացահայտել ֆիզիկայի «գեղագիտական տարրերը» և հաղորդակից դարձնել նրանց: Ֆիզիկայի ուսուցման մեջ գեղագիտական դաստիարակությունը կարևոր բաղադրիչ է: Այս առարկան արդյունավետ դասավանդելու համար թեմաները պետք է կապել կյանքի հետ, ցույց տալ, որ դրանք մեր կյանքի հիմքն են: Բազմաթիվ օրինակներով սովորողները համոզվում են, որ շատ հաճախ որտեղ գեղեցկությունն է, այնտեղ էլ ճշմարտությունն է: Ֆիզիկայի հիմնարար օրենքները որպես կանոն գեղեցիկ են: Դասերը, որոնցում կիրառվում է հատուկ ընտրված գեղագիտական նյութ, հարստացնում են սովորողներ հուզաշխարհը, ծանոթացնում են այն խորը ներդաշնակությանը, որը որոշում է բնության արտաքին գեղեցկությունը: Օրինակ՝ արձագանքի առկայության կամ բացակայության պատճառը, տերևների կամ ջրվեժի աղմուկը, ծիածանի առաջացումը, երկնքի կապույտ գույնը, լույսի և ստվերի խաղը: Շնորհանդեսների, գեղարվեստական խոսքի, երաժշտության, նկարչության կիրառումը դասերին կօգնի ավելի արդյունավետ դարձնել դասը, հասնել դասի գերագույն նպատակին՝ բազմակողմանի զարգացած անհատի ձևավորմանը: Իսկ եթե այդպիսի դասերն ուղեկցվում են նաև պատմական փաստերի մասին զրույցներով, արձակագիրների կամ պոետների ստեղծագործություններից հատվածների ընթերցումով՝ վստահ եղեք, որ այդ թեման սովորողները երկար ժամանակ կհիշեն: Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողական միջոցներից մեկն է: Ինչպես օրինակ՝ մեծն Թումանյանին անհրաժեշտաբար պետք է ընթերցեն ոչ միայն գրականության դասերին, այլ նաև բնագափտության՝ ֆիզիկայի, կենսաբանության, քիմայի, աշխարհագրության,

աստղագիտության, քանի որ Թումանյանի աննման պատկերների, համեմատությունների լայն օգտագործումը կհեշտացնի բնական շատ երևույթների գիտական ընկալումն ու յուրացումը: Ներկայացնենք մեծ հայի անսահման տիեզերքի գաղտնիները բացահայտող բանաստեղծություններից մեկի՝ «Սիրուսի հրաժեշտը» բանաստեղծությունից մի հատված.

Սիրո՛ւս, երկնից ահեղ անցվոր,

Ո՞րկից եկել,

Ո՞ր ես թեքել,

Ո՞ր ես ճեպում էդքան հզոր,

Անճառ թափով,

Անձեր ճամփով,

Դարե՛ր, դարե՛ր հազարավոր...

Բարի ճամփա՛, հյո՛ւրըդ մեր հին.

Եվ թե տեսնես՝

Մեզնից էսպես

Մի հարցում տուր հզոր մահին.

-Մարդու քանի՞ սերունդ կանի

Մի հրաժեշտն աստեղային:

Ամենապայծառ աստղին իր այս գեղեցիկ անդրադարձով՝ Թումանյանը նաև ներկայացնում է աստղագիտական տվյալներ, որոնք պոեզիայի միջոցով կարող են հասնելի դառնալ ընթերցողներին:

Եզրակացություն

Այսպիսով ֆիզիկայի ուսուցչի հիմնական նպատակն է սովորողների մեջ հետաքրքրություններ առաջացնել բնական գիտությունների և առաջին հերթին ֆիզիկայի նկատմամբ: Այդ նպատակով հետաքրքրաշարժ հարցերի և խնդիրների միջոցով դիտարկվում են մեր շրջապատում տեղի ունեցող բազմաթիվ երևույթներ, որոնք բացատրվում են հիմնականում ֆիզիկայի օրենքներով ու օրինաչափություններով և առնչվում են կենսաբանության, քիմիայի, ֆիզիկական աշխարհագրության, օդերևութաբանության, գրականության ու արվեստի, սպորտի, ռազմագիտության, տրանսպորտի, աստղագիտության, էկոլոգիայի, խոհարարության և մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառների հետ: Դասերի ժամանակ հետաքրքրաշարժ հարցերի դիտարկումը սրում է աշակերտների ուշադրությունը, զարգացնում է նրանց հետաքրքրությունը և նպաստում դասի արդյունավետության բարձրացմանը:

Հետաքրքրաշարժ հարցերն ու խնդիրները ուսուցիչը կարող է օգտագործել նաև արտադասարանական միջոցառումների՝ վիկտորինաների, ցերեկույթների և մրցույթ-երեկոների նախապատրաստման և անցկացման ժամանակ:

Մանկավարժները տարբերվում են բոլորից, քանի որ բոլորն ուզում են իրենց երեխաներին թողնել լավ աշխարհ, իսկ մանկավարժները ցանկանում են աշխարհին թողնել լավ երեխաներ: Երեխաները պրոբլեմների աղբյուր չեն, նրանք պրոբլեմներ լուծելու համար անհրաժեշտ ռեսուրս են: Երեխաները կարող են մեզ օգնել, քանի որ մարդկության ապագան իրենց մեջ կրող էակներ են:

Կրթության նպատակը պարզապես դատարկ միտքը լցնելը չէ: Նպատակը բաց մտածող մարդ ձևավորելն է: Մարդու միտքը նման է օդապարիկի. այն աշխատում է, երբ բաց է:

Օգտագործված գրականության ցանկ

- Գրիգորյան Լ. «Ֆիզիկայի պատմության ձեռնարկ», Երևան 2007,
- Խաչատրյան Ս. «Կամուրջներ պատերի փոխարեն», Երևան, 2014,
- Ծատուրյան Պ. «Զրույցներ ֆիզիկայի մասին», Երևան 1989,
- Պետրոսյան Գ. «Ֆիզիկան մեր շրջապատում», Երևան 2005,
- Պետրոսյան Գ. «Ֆիզիկայի մրցույթ-երեկույթի կազմակերպումն ու անցկացումը», Երևան, 1979,
- Հանրակրթության մասին օրենքը,
- Վիքիպեդիա ազատ հանրագիտարան: